

## Հ. ԹՈՒՐՇՅԱՆ

### ՀԱՅ-ՀԱԲԵՇԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՆՋՈՒԹՅՈՒՆՆԵՐ\*

Հարեւ իրոնական մեծ գործիչ Եփեսոսի վարրի և հրաշագործությունների վերաբերյալ հատվածները ընդհանրապես սովորական վարքագրությունների նման լինելով, գանց ենթառնում:



«Քրիստոնեությունը Հարեւստան է մուտք գործել Ալեքսանդրիայից (ղպտիական), ամենայն հավանականությամբ ոչ առանց չույն վաճառականների աջակցության: Հարեւրստանի դարձի ժամանակ պայքար է մղվել ոչ միայն քրիստոնեականի և հուդայադավանների միջև, այլև քրիստոնեական տարրեր եկեղեցիների միջև: Այսպես, պահպանվել է Կոստանդիանոսի 356 թվակիր նամակը, որով նա (Աքսումի եթովպական թագավոր) էզանին և նրա եղբոր Սալադանին նախազգուշացնում է նրանց դարձի բերած զբաղմունքի և նախապես Ֆրումենտիոսից և հանձնարարում է իր նվիրակ արիստական Թեոֆիլին: Կոստանդիանոսի այս նամակն ուղղակի վկայում է, որ Հարեւստանի դարձի ժամանակը պետք է համարել 4-րդ դարը: Հարեւստանի դարձի մասին հարեւական աղբյուրները հաղորդում են բազմաթիվ տարրեր պատմություններ, որոնք որքան «հետաքրքրական» են, այնքան էլ անհամարտանման: Հաղորդում են իրենց երկիրը եկած ինն երանելիների, ի փառս հավատի և Ղպտիական-հարեւական եկեղեցու նրանց կատարած սխրագործությունների մասին: Փաստն այն է, որ Քրիստոնեական եկեղեցին ամուր և բարձր դիրքեր զբաղեցնում է Հարեւստանում...»<sup>5</sup>

Այնքան, որքան Աքսումի եթովպական թագավորության պաշտոնական գեեզ լեզուն

այժմ գործ էածվում միայն եկեղեցական գրականության մեջ, իսկ քրիստոնեությանը հարատևորեն հավատարիմ մնացած հարեւական ժողովուրդներն արդեն շատ վաղուց խոսում են տարրեր լեզուներով, դավանական և պաշտամունքի որոշ տարրերություններ են առաջացել հարեւական լեռնաշխարհի անառիկ ամրաներին՝ ապավինած ասորիկյան այդ քրիստոնյաների մեջ, տարրերություններ, որոնք, իհարկե, վերջ ի վերջս դուրս չեն դալիս միաբնակության դավանաբանական շրջանակներից: Այդ փաստական որոշ տարրերությունների ուժով էլ ստեղծվել են նաև դարձի տարրեր վարիանտներ, պատումներ:

Աքսումի եթովպական թագավորությունը հաղորդակից էր հունա-հռոմեական բարձր մշակույթին: Այդ է վկայում հենց միայն քրիստոնեության մուտքը: Աքսումի եթովպական թագավորությունը շատ հզորացավ 1—7-րդ դարերում: 6-րդ դարի առաջին կեսին Կայսեր թագավորը սերտ հարաբերություններ ուներ բյուզանդական Հուստինիանոս կայսեր հետ և վերջինիս նավատորմի օգնությամբ նվաճեց Կարմիր ծովի արևելյան արաբական ափերը՝ Հիջազը, Եմենը, Երջանիկ Արաբիան, և հարեւները 72 տարի տիրություն արին արաբական երկրներում: Միայն 598 թվականին, իրենց աշխարհակալությունից մոտ չորս տասնամյակ առաջ, արաբներին հաջողվեց թոթափել հարեւական լուծը: Չորս տասնամյակ հետո սկսված արաբական արշավանքները բազմաթիվ խիստ անբարենպաստ պայմաններ ստեղծեցին Աքսումի եթովպական թագավորության համար: Երկիրը կղզիացավ, կորցրեց առափնյա ծովամերձ հողերը, քրիստոնյա ժողովուրդները բաշխվեցին

\* Եստրնակված «Էջմիածին» ամսագրի 1936 թվականի № IV—V-ից և VI-ից:

4. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիա, «Հարեւստան» ժողովածու, 1936 թ., էջ 351—352 (ռուսերեն):

5. Անդրախոր ձորերով կտրատված լեռնային տարրեր մեծության հարթություններ, հարեւական լեռնաշխարհի ընդունակ լանդշաֆտը:

լեռները, առևտուրը խափանվեց և երկիրը նահանջեց դեպի փակ տնտեսություն: Երկրի տերը դարձան կենտրոնախույս ֆեոդալները: Նեղուս-նեղեշտիները (եթովպական արքայից-արքաները) կորցրին իրենց կենտրոնաձիգ ուժը: 950 թվականին նրանք կորցրին նաև անվանական դարձած իրենց իշխանությունը և Աքսումի տեր դարձան հույալադավան ֆալաշները, ապա զագվինները:

Քրիստոնեական թագավորության վերականգնման, ինչպես նաև այդ թագավորությունը Սողոմոնյան հռչակելու (Ֆրեյսա առհասարակ այդ առասպելը հնարելու) գործում խոշոր դեր է կատարել 13-րդ դարի երկրորդ կեսի հարեշ նշանավոր կրոնական գործիչ, Գարրա-Լիբանոսյան հզոր ուղղության և համանուն բազմաթիվ վանքերի ու վանականության հիմնադիր, հարեշական առաջին սուրբ հռչակված Թակլա-Հայմանոթը (Գրախտ հավատո): Կրոնական այս զորեղ գործչի եռանդուն ջանքերով և եկեղեցու պաշտպանությամբ Իկունո-Ամլակը 1268 թվականին հաղթանակ տարավ, տապալեց զագվինների իշխանությունը և իրեն նեղուս-նեղեշտի հռչակեց: Թակլա-Հայմանոթը մինչ այդ և դրանից հետո էլ եռանդուն կերպով քրիստոնեություն էր տարածել և տարածում հեթանոսական Շոա երկրամասում: Այդ երկրամասում էին իրր թև տալատարան դռնը շուրջ երեք դար առաջ տապալված Սողոմոնյան իշխանության շատավիղները: Հիմա նա այդ շատավիղներից մեկին բարձրացնում ու դարձնում էր բովանդակ Հարեշատանի նեղուս-նեղեշտի՝ նրա հետ կնքելով Եկեղեցու համար ձեռնուռ պայմանագիր: Իկունո-Ամլակն իր հողերի մեկ երրորդը նվիրում է Եկեղեցուն: «Քաջի դրանից, Թակլա-Հայմանոթի հետ կնքված համաձայնությամբ, ոչ մի բնիկ տեղացի հարեշ իրավունք չունի արունա (Հարեշատանի կրոնապետ) ընտրվելու: Անպայման պետք է դպտիների պատրիարքը արունա ընտրի և նրան Կահիրեից ուղարկի Հարեշատան»<sup>6</sup>: Ամեն անգամ, երբ վախճանվում է արունան, Գոնդարի տեր իշխանը (որտեղ Աքսումից հետո նստում է արունան) կամ թև նեղուս-նեղեշտին (և թև վերջինս ուժեղ է և Գոնդարի տեր իշխանը նիթարկվում է նրան) 10.000 ավատրիական թալեր է ուղարկում դպտիների պատրիարքին և նույնքան էլ դրամ ծախսում պատվիրակության վրա և նոր արունա է ստանում նգիպտոսից: Այս եղանակով ընտրված կամ ստացված արունան սովորաբար անիրազեկ է լինում հարեշական թև՝ պայմաններին,

թև՝ լեզվին, և հեշտությամբ խաղալիք է դառնում իրեն շրջապատող հոգևորական վերնախավի ձեռքին: Այս դեռ ոչինչ: Պատահում է նաև, որ դրսից ուղարկված արունան չի ընտելանում տեղական պայմաններին, չի սիրում այն երկիրը, որտեղ եկել է ղեկավարելու Եկեղեցին: Այնպես հաճախ նա մնում է այն Եկեղեցու (և այդ Եկեղեցու վրա խոշոր ազդեցություն ունեցող այս կամ այն երկրի) գործակալը և որպես օտար ուժերի դորձակալ՝ ընդհարման մեջ է մտնում տեղական ուժերի հետ: Հարեշներն իրենց պատմության ընթացքում հաճախ են նկատել այս ցավոտ երևույթը:

Հարեշական Եկեղեցին իրավունք ունի բնիկ տեղացիներից ընտրելու միայն արունալի տեղակալ, որ տեղական լեզվով կոչվում է էշեզե կամ շեկի: Մատնացույց արված իրադրության և դրանից բխող թշնամական հարաբերությունների պատճառով շեկին չի նստում այն քաղաքում, որտեղ նստում է արունան, և, որպես կանոն, միշտ հակադրվում է արունալին: Համենայն դեպս այդպես է եղել մինչև Մենելիք երկրորդի թագավորությունը (1889—1913 թ.թ.), երբ նոր մայրաքաղաք հիմնադրվեց Հարեշատանի համար (Ադդիս-Աբեբա): Եվ Հարեշատանի բովանդակ պատմության մեջ, սկսած 13-րդ դարի վերջերից մինչև Թեոդորոս Երկրորդի (1855—1868 թ.թ.), հարեշական ազդահավաքման այդ մեծ մարտիկի ողբերգական վախճանը, շեկին երբ սոսկ կրոնա-վարչական պաշտոններ են կատարել, հանգիստացել են հարեշական բազմաթիվ վանքերի զվաճվոր հոգաբարձուն, իսկ արունաները, լայնորեն օգտագործելով բանադրման և ձեռնադրության իրենց վերապահված իշխանությունը, կողմնակիցների ստվար բանակ են ստեղծել իրենց շուրջը, ու հաճախ, հենվելով այդ ուժի վրա, հակադրվել են աշխարհիկ պետականությունն ուժեղացնել ձգտող կենտրոնաձիգ իշխաններին ու նեղուսներին, փաստորեն վարելով հարեշների երկրի նկատմամբ թշնամաբար տրամադրված ուժերին ու երկրներին ձեռնուռ քաղաքականություն: Հայրենասեր և լայնախոհ հարեշ իշխանները և նեղուսները խորին կրակիծով են նկատել այս անցանկալի երևույթը և բազմիցս փորձել են վերջ տալ այդ արդեն անբնական դարձած կարգին:

Հարեշական Եկեղեցին Ղպտրիական Եկեղեցուց անջատելու փորձեր արվել են 15-րդ և 16-րդ դարերում: Սակայն այդ փորձերի նպատակն է եղել ոչ թև սոսկ կազմակերպական ինքնուրույնություն տալ հարեշ Եկեղեցուն, այլ դավանաբանական հեղաշրջ-

6. ՍՍՈՄ Գիտությունների ակադեմիայի «Հարեշատան» ժողովածու, էջ 356:

ջում կատարել և Հարեշական եկեղեցին դարձնել Կաթողիկ եկեղեցու մի ճյուղը:

Քեոդորոս Առաջին նեղուս-նեղեշտին (1411—1414 թ. թ.) Իֆաթի և Աղալայի մահմեդականների համախափի դարձած արշավանքների օրերին օգնություն է խնդրում ֆրանկների թագավորից: Քեոդորոս Առաջինից հետո Զառա-Յակոբ նեղուս-նեղեշտին (1434—1468 թ. թ.), որի մոտ ապրում էր վենետիկցի հոգևորական նկարիչ Բրանկա-Լեոնեն, 1441—1445 թվականներին քանիցս օգնություն է խնդրում Հռոմի պապից խոստանալով Հարեշական եկեղեցին միացնել Հռոմեական եկեղեցուն: Ուշադրության արժանին այստեղ այն է, որ նման խոստումներ անում է մի թագավոր, որին ակադեմիկոս Տուրանը (և ուրիշ Հարեշադեաներ) անվանում են «Աֆրիկյան Փրիպոս Երկրորդ», այն բարեկարգիչ նեղուսը, որը հետագայում Ս. Նիստաթեոսի ուսմունքի հիման վրա վերակառուցեց Հարեշական եկեղեցին: Ուրեմն այնքան տաղնապալի էր Հարեշատանի քաղաքական գրությունը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանը մեծ փոփոխություններ առաջ բերեց նաև Հարեշական կյանքում: Շուրջաֆրիկյան ծովային ճանապարհի հայտնագործումից հետո փորթուգալացիներն արդեն անցնում էին Հարեշական ծովեղևների մոտով և հաստատվել էին Հնդկաստանում: Մյուս կողմից, ուժեղացած Օսմանյան կայսրությունը տիրել էր Կարմիր ծովի նաև հարավային երկու ափերին, և Հարեշատանի ծովեղևներում ապրող մահմեդական ժողովուրդները, օսմանցիներից հրազեն ստանալով, ուժեղացրել էին իրենց հարձակումները Հարեշական լիճնաշխարհի վրա: Ահմեդ Մոհամեդ Գուսեր (Չախլիկը), կազմակերպելով տեղական բոլոր մուսուլմանների ուժերը և օգնություն ստանալով օսմանցիներից, 1527—1543 թվականներին, 17 տարի շարունակ, ասպատակեց ամբողջ Հարեշատանը, կործանեց բոլոր քաղաքները, բոլոր եկեղեցիները, կոտորեց բնակչությանը, թագավորին փախցրեց երկրից դուրս (1541 թվականին նեղուս-նեղեշտի Լերնա Գենգելը մեռավ անապատում), թագավորամայր Հեղինեն փորթաթիվ համախոհներով աստանդական կյանք էր վարում, սարերին ապավինած: Այս շրջանում թագավորամայր Հեղինեն Փորթուգալիա է ուղարկում հայ ռեզնորական Մատթեոսին՝ օգնություն խնդրելով Արևմուտքից: Շատ թեր և ղեմ կարծիքներ են հայտնվել Հարեշատանի կողմից նվաճված ուղարկված այս առաջին հայ դիվանագետի մասին: Այդ նույն շրջանում, — գրում է ռուս ակադեմիկոս Հարեշա-

դեստ ակադեմիկոս Բ. Տուրանը, — 1513 թվականին, նույն Լերնա Գենգել թագավորի ժամանակ, մենք հանդիպում ենք Փորթուգալիայի էմբանուկ թագավորի մոտ ղեկավան ուղարկված հայ Մատթեոսին: Դա Հարեշական առաջին դիվանագետն է նվաճված, նրա հաղորդումների հիման վրա [պալատական գիտնական] Գամիան Գեոցր առաջին երկն է գրել Հովհան երեցի թագավորության մասին («Ավետիս մեր հայր թագավորին Հովհան երեցի գտնվելու առթիվ», 1531, Լիսաբոն—«Հայ-Հարեշական հարաբերություններից...» էջ 6, Պետերբուրգ, 1912 թ., ռուսերեն):

Ոմանք վաճառական են անվանել այս Մատթեոսին, ոմանք կրոնավոր (նվերեմ վրդ. Չարբեյան, Վահան վրդ. Հովհաննեսյան) — Լանատուր, Հ. Նալբանդյան, Արշակ Այսդյանյան և այլն)՝ միշտ թերահավատելով Ալիշանին: Մեր որոնումները ցույց տվին, որ նվաճված ուղարկված Հարեշական առաջին պատվիրակը՝ «հայ արունա Մատթեոսը», չէր կարող լինել ոչ այլ որ, քան այդ ժամանակ Հարեշատանում ղեկուս գոյություն ունեցող հայկական Ս. Ստեփանոսի անվան վանքի վանահայրը:

Որ Մատթեոսը միաժամանակ թե՛ կրոնավոր և թե՛ վաճառական է եղել, գիտեմ միշտ իրազեկ, բայց հաճախ ժյատ Ալիշանը: «Հռչակագրույն ևս է լինս ժե դարու և ի սկիզբն ժԶ-ին (1490—1520) դարմանալի առն Մատթեոսի կրոնատորի և վաճառականի զնսպանութիւն ի կրկին արքունիս՝ Եթովպացոց (Հեղինեայ թագուհուն) և Լուսախոտանազոց Պորտուգալաց (Մանուէլ Թագաւորի)»:

Հարեշատանի համար այդ օրհասական օրերին «անսպասելիորեն օգնություն հասավ դրսից: Հարեշատան ժամանեցին «մավր»-երի կատաղի հակառակորդները՝ փորթուգալացիները: Բայց օգնության հասած փորթուգալացիների հետ և ղեկ նույնիսկ մի փոքր էլ առաջ Հարեշատան ժամանեցին նաև կաթողիկ կրոնավորները: Չգտվելով Հարեշատանի քաղաքական հեղ-ճեղուկ վիճակից՝ կաթողիկ Բերմուդեսին հաջորդվեց դառնալ Հարեշների պատրիարք (1538 թ.), բայց նա անմիջապես որպես ղեկավան ուղարկվեց Հռոմ ու Լիսաբոն: 1555 թվականին Իդնատիոս Լույոլայի կարգադրությամբ եզմիտների նոր խումբ ուղարկվեց Հարեշատան: Նեղուս-նեղեշտի Մինասը (1559—1563 թ. թ.) ուժեղ հակահարված

7. Հ. Զ. Ալիշան, «Սխական», էջ 471:

8. ՍՍՏՄ Գիտությունների ակադեմիայի «Հարեշատան» ժողովածու, էջ 381:

տվեց եզրվաններին և նրանց վտարեց իր երկրից։

«1603 թվականին Հաբեշտան ներթափանցեց իսպանացի եռանդուն եզրվա Պայիզը (ըստ Ալիշանի և այլոց՝ «Հայադգեստ»)։ Նա արագորեն սովորեց եթովպական լեզուն և դարձրեց բաց արեց։ Այդ ժամանակ Հաբեշտանի իշխանությունը դավթած Ջա Գենգել իշխանը կաթոլիկություն ընդունեց և նամակներ էր գրում Հռոմի պապ Կղեմես 8-րդ-ին և Փիլիպոս 2-րդ-ին... Բայց Ջա Գենգելը շուտով տապալվեց. նեղուս Սուանյոսը նույնպես արամադիր էր կաթոլիկություն ընդունելու (որը բացատրվում էր Իսպանիայի հզորությունը)։ 1623—1625 թվականներին Հաբեշտան ժամանեցին Ալմեյդան, Ալֆոնս Մենդեսը, Հիերոնիմ Լորեն և ուրիշ եզրվաններ։ Կաթոլիկությունը պաշտոնական ճանաչում գտավ, և սկսեցին բոլոր հարեշներին վերամկրտել։ Դպտիական-հարեշական բահաններն ու վանականները կատաղի պայքար մղեցին նեղուսի դեմ և հաղթեցին։ Սուանյոսը հարկադրված էր հրաժարվել դահից։ Նրա որդին՝ Ֆասիլդասը, Հաբեշական Նկեղեցու թեկնածուն, սկսեց հայածել, արտաքսել և սպանել եզրվաններին... Ողվառներին վտարելուց հետո եվրոպացիներից շատ քչերն էին սիրտ անում ներթափանցելու Հաբեշտան։ Օրենք հրատարակվեց, որով մահվան էին դատապարտվում Հաբեշտան ներթափանցողները։ Ֆասիլդասի որդին՝ Հովնանը վարում էր «Հաբեշտանը հարեշների համար» բազաբակաությունը»<sup>9</sup>

17-րդ դարի կեսերին Հաբեշտան մտնելու փորձ կատարած ֆրանսիացի անհանգիստ բժիշկ Ֆրանսուա Բեռնին, — որն ի վերջո հաստատվում է Հնդկաստանը նվաճած Մեծ Մողոլների արքունիքում, — հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով հարեշների նեղուս-նեղեշտի կողմից Հնդկաստան զենպան ուղարկված հայկացի հայ վաճառական Մուրադի մասին, — որի հետ նա առաջին անգամ ծանոթացել էր հարավային Արարիայում և որի խորհրդով որոշել էր չլքնալ Հաբեշտան, — հարեշների այդ զգունության մասին գրում է. «Սակայն ես իմացա, որ այն ժամանակվանից, երբ թագավորամոր դավադրություններով բոլոր փորթուղայացիները կոտորվել էին կամ արտաքսվել՝ Գուայից իրենց բերած եզրվա պատրիարքի հետ միասին, կաթոլիկների համար անապահով էր դարձել այնտեղ։ Մի խեղճ կապուչինյան նույնիսկ գլխատվել էր

Սուաքենում այն բանի համար, որ փորձել էր մտնել նրանց երկիրը։ Ծիշտ է, ինձ հույն կամ հայ ձևացնելով ես ինձ քիչ վտանգի կենթարկեի, և եթե թագավորին դառնեի, ես կկարողանայի օգտակար լինել նրան որևէ բանով, նա ինձ հող կտար՝ ստրուկների ձեռքով մշակելու համար, որոնց ես կարող էի գնել, եթե փող ունենայի։ Բայց այդ զեպրում ինձ անխառնափնիորեն կատիպեն ամուսնանալ, ինչպես վերջերս հարկադրել էին մի հոգևորականի, որն այնտեղ էր ներթափանցել հույն բժշկի անվան տակ, և արդեն այլևս երբեք թույլ չէին տա դուրս գալու իրենց երկրից»։

16-րդ դարի երկրորդ կեսից մինչև 18-րդ դարի սկիզբը սպիտակամորթ եվրոպացիներին մուտքի համար դրված այս արգելքը չէր տարածվում հայերի ու հույների վրա։ Այս պերճախոս բացառությունը արձանագրել են բոլոր հաբեշագետները։

Վենետիկցի աշխարհագետ Բեշինգը (18-րդ դար) հաղորդում է, որ Հաբեշտանի վաճառականությունը զտնվում է հայերի ձեռքին։ Այս տեղեկությունը հաղորդող վենետիկյան հայ աշխարհագետ Ագոնցը («Աշխարհագրություն, Ափրիկե», էջ 527) համակարծիք չէ Բեշինգին, սակայն միշտ իրազեկ Ալիշանը հաղորդում է՝ «այլ ոչ անմասն յաշխարհական պաշտօնէից, մինչև գանձապետս իսկ կարգիլ ոմանց մերազնեայց՝ Թաղաւորաց նոցին յանցելում դարու, որպիսի էր Սելեֆ ուստա կոչեցեալն Արարիկիցի, որում յաջորդեաց յամի 1762 Յովհաննէս Թովմաջան, և ապա որդի սորա Պօղոս։ Յայտ է թէ նախնեաց նոցին յաճախ վաճառականական եկաւորութեամբ ծանուցեալ ես էր, մինչև (որպէս և այլու տեսաք, ի ժՁ դարու 1577 և 1603) Յիսուսեան հարք (Մելգոն, Սիւլիս, Պայիզ — Pays) հայազգեստ մտանել անդր»<sup>10</sup>։ Ավելին, անգամ 1538 թվականին, երբ կաթոլիկ Բերմուդեսին հաջողվում է հարեշների պատրիարք գտնալ, նա եւ բարձր է համարում իր հետ Հաբեշտան տանել հայերի։ Ալիշանը հաղորդում է՝ «... և Պերմուտէլի բնորելոյ պատրիարքի եթովպայ տանել ընդ իւր ի Լիզպոնայէ յնթովպիա (յամի 1538) երկուս հայս, զԿեստոն զմականուանեալն Ֆերնանտէզ և զԳաւսպար Սուրիանոյ, Թերեա Բերիացի (ասորի)»<sup>11</sup>։

\*\*\*

Հարեշների կողմից դավանակից հայի նկատմամբ տածված վատհույությունը խորսվում է աշխարհադրական տեսակետից իրարից շատ հեռու ընկած այդ ժողովուրդ-

9. ՍՍԻՄ Գիտությունների ակադեմիայի «Հաբեշտան» ժողովածու, էջ 392։

10. Զ. Ղ. Ալիշան, «Սրբական», էջ 471։

11. Նույն տեղում, էջ 458։

ների պատմական զարգացման ճակատագրի առանձնահատկությունների վրա՝ նրկու հանգամանք, երկու նախադրյալ փոխադարձաբար իրար լրացնելով, ստեղծել ու որոշել են այդ վստահության հիմքն ու բնույթը։ Առաջին նախադրյալը հարեշների կղզիացած վիճակն է Աֆրիկյան աշխարհամասի այդ անառիկ լեռնաշխարհում։

Երկրորդ նախադրյալն այն է, որ անհամեմատ ավելի ձեռներեց հայր, մեր պատմական դառն ճակատագրի բերումով, սկսել էր զուրպ գալ իր բնաշխարհից, բնվայելի իր շփումները և գոյության ու գործունեության նոր վայրեր որոնել։

Այս երկու նախադրյալների առկայության պայմաններում շաղկապող պարագա է դառնում դավանակցության հանգամանքը։

Այսպիսով, սերտ կապի կարիքն ու անհրաժեշտությունը փոխադարձաբար կար. մնում էին միայն շփման պարագաներ ու ծանոթության վայրեր, որ իրարից շատ հեռու ընկած այդ ժողովուրդները կարողանային գցել դարավոր բարեկամության հիմքը։ Այդ պարագաները և վայրերը պատմությունը բնականորեն նրանց։

1. Քաղկեդոնի ժողովից հետո, հայերը, ասորիները, դավանները (որոնց հետ միասին նաև հարեշները) կաղմեցին ուղղափառ միաբնակության մեծ խումբը։

Միաբնակ եկեղեցիների սերտ կապն սկսվում է Ալեքսանդրիայից (Եգիպտոս), որի աստվածաբանական դպրոցներում սովորում էին բոլոր միաբնակ եկեղեցիներից ուղարկվող աշակերտները (օրինակ, մեր պատմահայր Մովսես խորենաղին և նրա ընկերակիցները սովորել են Ալեքսանդրիայում)։ Սակայն արարական արշավանքներից հետո Ալեքսանդրիայի տեղն սկսեց բռնել երուսաղեմը, որտեղ հայկական Ս. Հակոբա առաքելական վանքը դարձավ բոլոր Կյուսիդյան միաբնակներին զոդող հիմնական օջախը։ Երուսաղեմի հայկական վանքի նշանակությունը բոլոր միաբնակների համար է՛լ ավելի բարձրացավ 1311 թվականից, երբ Եգիպտոսի նասոր-Մուհամեդ սուլթանը հատուկ հրովարտակով Երուսաղեմի հայկական Ս. Հակոբա վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոսին կարգեց «Ինքնագլուխ պատրիարք հայոց և եկեղեցական պետ հայերուն և անոնց դաւնակից ուրիշ արեւելիներուն» (Օրմանյան, «Ազգապատում», էջ 1830)։

Բոլոր քրիստոնյաների համար ամենանմիրական սրբավայրում հարուստ ու ազդեցիկ հայկական վանքի առկայությունը, որն այդ սրբավայրում միակն էր բոլոր միաբնակների համար, ապահովում էր Հայոց եկեղեցու առաջատար ու ղեկավար դերը միաբնակ եկեղեցիների մեջ։ Մի կողմից Երուսաղեմի

հայկական վանքը, որն իր դուռն եկող միաբնակ ուխտավորներին և աշակերտող ու աղոթող կրոնավորներին հյուրընկալություն էր ցույց տալիս դարեր շարունակ, իսկ մյուս կողմից, վանքի շուրջը համախմբված հայ հոգևորականության մտավորական համեմատաբար բարձր մակարդակն ապահովում էր Հայ եկեղեցու առաջատարությունը բոլոր մյուս միաբնակ եկեղեցիների մեջ։ Հարեշներն էլ մյուս միաբնակների թվում դարեր շարունակ վայելել են երուսաղեմի Հայոց Ս. Հակոբա վանքի ասպնշական հյուսիսությունն ու պաշտպանությունը։ Վեցերորդ դարից սկսած Հայ եկեղեցին ուղղափառ միաբնակության ջահն էր հանդիսացել արևելյան հին եկեղեցիների մեջ։

«Ապոխական պատրիարքությունը, — գրում է ակադեմիկոս Բ. Տուրան, — և նրանից կախում ունեցող՝ հեռավոր Աֆրիկյան նեոված Հարեշատանը, չէին մոռանում հակաբաղկեզոնականների հայկական մեծ հյուղի մասին։ Հանդիպման վայրը, իհարկե, ամենից առաջ Երուսաղեմն էր, որտեղ այժմ էլ հարեշ կրոնավորները ենթակա են հայ պատրիարքին»<sup>12</sup>։

«Աղոնը են հշմարիա քրիստոնեություն նշանները, — ասում է Տեղաշմաշ Քասսան (ապագա Հովհաննես Չորրորդ նեղուսենեզեշտին) հայկական եկեղեցական պատմիրակության անդամներին։ — Եվ ես լսած եմ առաջուց ձեր պատմածները, և մեր ազգեն երուսաղեմի մեջ դանվող կրոնավորաց հայոց վանքեն կերակրվիլ... Կուզեմ, որ հայոց աբունան բոլոր իմ ժողովրդիս ցույց տամ և անոնց սրաին մեջ համակրության սերմ ձգեմ, որ իրենք իրենց աշոք տեսնելով ձեր և խաղվող եպիսկոպոսին մեջ եղած տարբերությունը բարոյական և քաղաքական մասին, մանաւանդ կրոնական և եկեղեցական արարողությունց և պաշտամանց մեջ, ձեր եկեղեցվույն վսեմությունը, իրենք անձամբ վճիռ տան»<sup>13</sup>։

2. Ինչպես առհասարակ հայ-հարեշական բարեկամությունը, այնպես էլ մասնավորապես հայ և հարեշական եկեղեցիների բարեկամությունը շարունակ վառ պահող և շերտաղնող օջախներից մեկն էլ, բացի Երուսաղեմի հայկական Ս. Հակոբա վանքից, եղել է հեռավոր Հարեշատանում 7-րդ դարում հիմնված հայկական վանքը։ Այս վանքի մասին հայ գրականության մեջ առաջին վկայությունը կարդում ենք Գեորգ արքեպիսկոպոս Արսւնյանի «Ուղեկրութիւն

12. Բ. Տուրան, «Հայ-հարեշական հարաբերությունները...», էջ 2։

13. Տիմոթեոս Մ. վրդ. Մափրիշյան, «Երկամեայ պաշտոնութիւն ի Հարեշիոս ան», հատ. Ա, էջ 141—142։

ի Հասկերիստան» (Կոստանդնուպոլիս, 1930 թ.) դրությամբ Ադդիս-Աբեբայի հայկական նորակառույց եկեղեցին օծելու կապակցությամբ Ադդիս-Աբեբա ժամանած Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը տեսակցություն է ունենում արտաքին գործերի մինիստր, հարեչ պատմարան Բլազզա Կեդա Հուրիի հետ:

Հարեչ պատմարանն անձնական խոսակցություն ժամանակ հաղորդում է, թե հայ-հարեչական հարաբերությունները սկսված պետք է լինեն դեռևս 7-րդ—8-րդ դարերում, երբ Հարեչստանում հիմնվել է հայկական գաղութ-վանք, որի ավերակները մինչև օրս էլ մնացել են Դեսիս բաղաբի մոտ, և որ այդ ավերակները ստույգ ցույց են տալիս սովյալ վանքի հայկական ճարտարապետության կառուցված լինելը: Հարեչ պատմարանն ավելացրել է նաև, որ հարեչական հին մատենագրության մեջ պահպանվել են այդ Հայք անվան հիշատակություններ:

Սակայն նախքան Հարեչստանում հայկական վանք կառուցելը հայը պետք է զանգվածաբար ոտք դրած լինե՝ Պաղեստին և Եգիպտոս: Եվ հայը զանգվածորեն դեպի հարավ՝ Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս, ապա նաև «Թերապիդ» ու Հարեչստան է անցել ամենից առաջ անաթոլիական (անապատական) շարժման կապակցությամբ, երբ դեռ արտաքական արշավանքներից առաջ Երուսաղեմում և նրա շուրջը հիմնվել էր հայկական 70 վանք, իսկ արտաքական արշավանքների առաջ բերած վայրիվերումներից հետո, ինչպես հաղորդում է Մովսես աշխարհի տեր Համադասյալ Կամսարական Պահլավունի իշխանի պատմությունը Երուսաղեմ գնացած Անաստաս վարդապետ Գաղատիացին, «Արդ բազումք յեգիպտոս և յկղեսառներ և ի Թերապիդ և ի լեռն Սինեական կային մենաստանք հայոց, նաև ի սուրբ լեռն Թաբոր, և յեզր ծովուն Տիրերայ և յայլ սահմանս Պաղեստինոյ, զոր յուլիս խմովին իսկ աշօք տեսեալ, զամս բազումս կայի լինելով յաշխարհին յայնմիկ, և ամենայն աստուածաշունչ և հոգեպատում պատուիրանք անպակաս զոյր ի հայկեան լեզուս, յամենայն մենաստանս Երուսաղեմի և որ յովսա շուրջ Երուսաղեմաւ»<sup>14</sup>:

Արարական արշավանքների առաջն առնելու համար, հաղորդում է Իսլամի հմուտ պատմարան Ավդուատ Մյուլլերը, «Կայսեր հաղորդվեց, վերջապես, շատ մեծ զորք հավաքել. բյուզանդական մի քանի պատմագիրների տեղեկություններով զորքի թիվը հասնում էր 80.000-ի: Նրանց հրամանատարը նորից Թեոդորոսն էր, կայսեր գան-

ձապետը (սակելարին). նա անձամբ ստանձնել էր բանակի միջովը հանդիսացող կայսերական 40.000-անոց զորքի հրամանատարությունը: Մյուս կեսը կազմված էր հայերից, որոնց հրամանատարն էր Վահանը... արաբները հունական զորքը հաշվում էին առնվազն 100.000, որոնց թվում 12.000 բրիտանյա արաբ և 12.000 հայ»<sup>15</sup>:

Հայոց զորքը հունաց զորքի հետ պարտության մատնվեց, հրամանատար Վահանը սպանվեց, հայ զորքը կոտորվեց, գերվեց, իսկ մի մասն էլ, հյուսիս տանող ճանապարհն արդեն կտրված լինելու պատճառով, անցավ Երուսաղեմ, ապա Եգիպտոս: Թեև այդ դարերում հաստատված կարգով գերի ընկած հայ զինվորները մտան արաբական բանակի մեջ և, մեզ հասած տեղեկություններով, նրանցից ոմանք անգամ մասնակցեցին Եգիպտոսի նվաճմանը, բայց պետք է ենթադրել, որ մի մասն էլ, գերի չընկածները, Եգիպտոսի նվաճումից հետո պետք է ապավինեին ավելի հարավ, որտեղ այդ ժամանակ կային Սուդանի Մերոյի-Նարաթի և Աբսուսի եթովպական բրիտանական թագավորությունները:

Դրանից հետո հայի զանգվածային անցում դեպի հարավ պատմության մեջ արձանագրված է 11-րդ դարում, երբ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը այցի գնաց Եգիպտոս և իր եղբորորդուն Գրիգորիսին (Մովսիս իշխանաց տնից, Պահլավունի) ձեռնադրեց եպիսկոպոս և կարգեց եգիպտահայ գաղութի հովիվ: Եգիպտահայ գաղութի տեսակարար կշիռը բովանդակ հայ կյանքում այնքան էր բարձրացել, որ այս Գրիգորիսը շուտով իրեն կաթողիկոս հռչակեց<sup>16</sup>:

Անգլիացի նշանավոր արաբագետ Ֆրիսկ Հիթթին իր «Արաբների պատմությունը» գրքում (էջ 345, 622, 623, 630) բազմիցս արձանագրում և զրկատում է հայ վեզիրների տիրապետության շրջանը Ֆաթիմյանների պատմության մեջ: Երբ Սալահադդինը գրավեց Եգիպտոսը և այնտեղ հիմնեց իր էյուպյան հարստությունը (1169 թ.), նրան դիմադրություն ցույց տվողը միայն հայկական զորքն էր, որովհետև Եգիպտոսում այդ ժամանակաշրջանում հաստատվել էր հայկական գերիշխանություն: Հայ զորքը նահանջեց դեպի հարավ: Հենց այդ շրջանում էլ Հարեչստանի պատմության մեջ արձանագրված է, որ Լալիբալա բարեպաշտ թագավորը Եգիպտոսից սպիտակամորթ վարպետներ բերեց և բարակուռ վանքեր կառուցեց իր երկրում:

15. Ավդուատ Մյուլլեր, «Իսլամի պատմությունը», հատ. Ա, էջ 283 (ռուսերեն):

16. Օրմանյան, «Աղագապատում», էջ 1316:

14. Անաստաս վրդ. Գաղատիացի, «Վասն վանորդից որ ի սուրբ բաղաբն յերուսաղեմ», էջ 12:

Հաբեշտանում Գեորգի քաղաքի մոտ Հայր կղզում գեոս 7-րդ դարում կառուցված Ս. Ստեփանոսի անվան հայկական վանքի մասին երկու հիշատակություն է պահպանվել Բայեզա Մարիամ նեղուս-նեղեշտի (1468—1478 թ. թ.) ժամանակագրությունում:

«Իսկ ինքը՝ թագավորը վեր կացավ իր ամբողջ զորքով և դնաց մինչև որ հասավ Յաշկու դավառը: Հայրի մարդիկ նրան դիմավորեցին մեծ պատվով: Այլ երբ թագավորը տեսավ Հայրի մարդկանց մատուցած պատիվն ու նրանց զորքի փառահեղությունը, զարմացավ, շատ ուրջունեց նրանց և թույլ տվեց, որ վերադառնան իրենց տեղը»:

«Զառա-Սոյուն (սատանա) անվանյալ Զառա-Սոյուն, որը բամբասաններ տարածելով բազմաթիվ վանականների ու զպիրների մահվան պատճառ էր դարձել, ձեռնադրեցին և արտոթյեցին Հայր, երբ Աստված նրան (Թագավորին) հայրնի դարձրեց նրա (Զառա-Սոյունի) գործած շատ անարդարությունները»<sup>17</sup>:

Պրոֆեսոր Վ. Բուլտովը («Христианское учение», 1898, փետրվար, էջ 191—198),— ըստ որի Հայր կղզի է, իսկ նրա վրա կառուցված հայկական վանքը՝ Ս. Ստեփանոսի անվան,— հաբեշական կյանքի անօրինման գործում այնքան մեծ ազդեցություն է վերապահում Հայր վանքին, որ կարծում է, թե Սողոմոնյան հարստությունը Հաբեշտանում վերականգնող նեղուս-նեղեշտի Իկոնու Ամյալը (1268—1285 թ. թ.) չէր կարող հողարածանման հարցում հաշվի չառնել Հայր վանքի վանահոր կարծիքը: Այլևհետև, ինչպես նշել ենք, հաբեշների «Արքաների փառք» և «Արքաների հարստություն» մատյաններում հիշատակված է, թե Սողոմոնյան հարստության վերականգնման գործում վնասակար դերը խաղացել է հաբեշական առաջին սուրբ Թակլա-Հայմանովը, սակայն պրոֆ. Վ. Բուլտովը հաբեշական մի հին տարեգրության մեջ կարդացել է նաև այսպիսի ձևակերպում. «Իկոնու Ամյալը զազվենների ձեռքից իշխանությունն առավ փափաղ արքա Կյուրեղի և Հայրի վանահայր Յատու-Մոռյի աղոթքների, պանծալի հայրապետ արուսեա Թակլա-Հայմանովի բարեխոսության շնորհիվ»: Պետք է ենթադրել, որ Կյուրեղը, «փափաղ» տիտղոսով, Ալեքսանդրիայի Ղապտի եկեղեցու պատրիարքն է: Ուրեմն, Սողոմոնյան հարստությունը վերականգնվել է Ղապտի եկեղեցու պետի և Հայր վանքի վանահայր

հոր աղոթքների շնորհիվ, բայց բնիկ հաբեշ Թակլա-Հայմանովի բարեխոսությամբ: Հայ արքա Գեորգ Հասալեցին (ըստ Ռենե Բասեի ընթերցման՝ Հաթիլեցին), որին հաբեշական տարեգրություններն անվանում են Բաալա Սատատ (ժամերի տեր, ժամերի գիտուն, գիտակ) Հայր վանքի վանահայրերից է եղել: Գեոգ լեզվի ճոխության և զեղեցկության լավագույն նմուշը՝ «Կույսի օրհներգությունը», ըստ սկզբ. Բ. Տուրանի, պատկանում է արքա Գեորգի գրչին<sup>18</sup>:

Հաբեշական սուրբ Մակարա էզդինն, կրոնական անունով Ս. Նվստաթեոսը, սերտորեն կապված է եղել այդ վանքի հետ և իր հոգևոր սնունդն ստացել է այդ վանքում: Հայր վանքը, որն ավերվել է, հավանաբար, 16-րդ դարի առաջին քառորդում, Մոհամեդ Ղանի արշավանքների ժամանակ, դարձրեց շարունակ հայ-հաբեշական մերձեցման հիմնական օջախներից մեկն է եղել:

3. Նվստաթեոսականությունը: Ինչպես տեսանք «Հաբեշ կրոնական գործիչ Նվստաթեոսը և Հայ եկեղեցին» հոդվածի երկրորդ մասում («Էջմիածին», 1956 թ., № VI), 14-րդ դարի առաջին կեսում հաբեշ սուրբ Նվստաթեոսը եռանդուն պայքար է մղել հաբեշական եկեղեցին հեթանոսական և մուսուլմանական շրջապատի ազդեցություններից մաքրելու համար: Նա իր այս պայքարում հենվել է Հայ եկեղեցու վրա և այնքան է կապվել Հայ եկեղեցու հետ, որ նրան հաճախ հայ են անվանել, թեև նա եղել է հաբեշ, ազնվական տոհմից, Մակարա էզդին անունով: Այս կրոնական մեծ գործիչը Կեսախ լեռան վրա հիմնել է Դարբա-Բիզանոս վանքն ու համանուն միաբանությունը, որը շարունակել է պայքար իր հիմնադրի ուսմունքի հաղթանակի համար: Զառա-Հակոբ նեղուս-նեղեշտին, որ զահ բարձրացավ Կոստանդին Առաջին անունով (1434—1468), Ս. Նվստաթեոսի ուսմունքի հիման վրա վերակառուցեց Հաբեշական եկեղեցին, ավելի «իշտը» սահմանեց այնպիսի կարգ ու կանոն, որ հաբեշական քրիստոնեությունն ազատվեց վաղուց արմատացած մուսուլմանական ու հեթանոսական բարբերից: Նրա այդ բարեփոխությունները, որոնք կատարվում էին Հայ եկեղեցու բարոյական ազդեցության տակ, ապահովեցին միաբնակ եկեղեցիների մեջ Հայ եկեղեցու առաջատարության ճանաչումը հաբեշների կողմից: Այդ ճանաչման հետևանքով Հայ եկեղեցու որոշ սրբեր և ավանդություններ մտան հաբեշական սինարսարի մեջ:

17. Բայեզա-Մարիամի ժամանակագրությունը գտնվում է Բրիտ. թանգարանում, ձեռ. № 321 և Փարիզի Ազգային մատենադարանում, ձեռ. № 143: Փաղվածքը՝ ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի «14-րդ և 16-րդ դարերի հաբեշական ժամանակագրություններ» ժողովածուից:

18. Տե՛ս Բ. Տուրանի «Новое собрание Эфипосских рукописей» հոդվածը «Современная Летопись» հանդեսում, 1920 թ.: